ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ա Ն Վ Տ Ա Ն Գ Ո Ւ Թ Յ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« » _____ 2014թ. ք. ԵՐԵՎԱՆ N _____

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1»ծածկագրով

էլեկտրոնային շրջանակային ընթացակարգի հրավեր

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով էլեկտրոնային շրջանակային ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Ծառայությունների մատուցման պայմաններն են՝ ք. Երևան:

Հայտնում ենք Ձեզ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել armeps.am համակարգով՝ մինչև **2014թ. հունիսի 19-ը, ժամը 10 ^{30}-ն:**

Հայտերը կբացվեն armeps.am համակարգում՝ **2014թ. հունիսի 19-ը, ժամը 10^{30}-ն:** Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը **/Հավելված 1/** և գնային առաջարկը **/Հավելված 2/**: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **սույն հրավերով և «Գնումների մասին» ՀՀ օրենքով** սահմանված կարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկություններ ստանալու համար դիմել հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Բաբայանին /հեռ. 579-599/:

Առդիր՝ 11 թերթից:

Հարգանքով՝
ՊԵՏ՝ Մ. Ղարաջյան

Հավելված 1

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով

ընթացակարգի հրավերի

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ ԿԱ ԱԱԾ տնտեսական վարչության կողմից **«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1»** ծածկագրով հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին /չափաբաժիններին/ և հրավերի /ծանուցման/
Չափաբաժնի /չափաբաժինների/ համարտը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1/ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2/ համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված2

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏվ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով

ընթացակարգի հրավերի

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏվ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին

Գնային առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏվ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը /ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն

Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ միավորի գների՝

Չափ-րի հ/հ	Գնման առարկայի անվանումը	Արժեքի հաշվարկ		Առաջարկված միավորի գինը առանց ԱԱՀ-ի /թվերով և տառերով/	Առաջարկված միավորի գինը ԱԱՀ-ով /թվերով և տառերով/	Քանակը	Գումարը /ՀՀ դրամ/
		Արժեք*	ԱԱՀ-ն**				
1	2	*3*	*4*	*5=3*	*6=3+4*	*7*	*8=6x7*
1	Բենզին «Ռեգուլյար»					571740	

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

**** Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ
N 11/ -2014

ք. Երևան **«-----» ---------- 2014թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և _____ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____ _____ -ի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի **N 1 հավելվածով՝** Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի վառելիք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից և շարունակվում է մինչև 2014 թ-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի **N 2 հավելվածով** սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանադրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ

պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Ապրանքի մատակարարումը կտրոնային եղանակով իրականացնելու դեպքում կտրոնների գործողության (վավերականության) ժամկետ սահմանել կտրոնները տրամադրելու պահից առնվազն մեկ տարի:

3.4.9 Սույն պայմանագրի 3.4.8 կետում նշված ժամկետում կտրոնները չիրացվելու դեպքում ողջմիտ ժամկետով երկարաձգել կտրոնների գործողության ժամկետը կամ հետ ընդունել կտրոնները և կատարել վերահաշվարկ:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _____ _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր Ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի **N 2 հավելվածում:** Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **N 3 հավելվածով**՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են: Դեկտեմբեր ամսվա վճարումն կիրականացվի մինչև 2014 թ-ի դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման–ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի

հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ **(Հավելված N 4):**

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05(զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5(զրո ամբողջ հինգ տասնորդական) %-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2014թ.:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները /խնայողություններ/ և /կամ/ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 /չորս/ էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը,:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱ ծառայություն	_____
ք.Երևան, Նալբանդյան104	_____
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	_____
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301067	**Հ/հ** _____
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ** _____

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

Հավելված 1

«___» _____ 2014թ. կնքված

N _____

ապրանքների մատակարարման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ
ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ

Չափ-նի հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ
1	Բենզին «Ռեգուլյար»	լ	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 0 C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:
			Մատակարարումը՝ Բաքով և կտրոնային: Կտրոնային տարբերակով լիցքավորման հնարավորություն ապահովել ՀՀ բոլոր մարզերում, իսկ ք. Երևանում, Նալբանդյան 104 հասցեից առավելագույնը 3600մ շառավիղով:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱ ծառայություն
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

_____
_____
_____

Հ/հ _____
ՀՎՀՀ _____

Հավելված 2
«___» _____ 2014թ. կնքված
N _____
ապրանքների մատակարարման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ

Չափա-բաժնի Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը ըստ 2014թ-ի եռամսյակների և ամիսների						Ընդհանուր քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Գումարը /ՀՀ դրամ/
			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ					
			VII	VIII	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
I	**Բենզին «Ռեգուլյար», այդ թվում**	**l**	**95290**	**95290**	**95290**	**95290**	**95290**	**95290**	**571740**		
1	**ք. Երևան**	**l**	75610	75610	75610	75610	75610	75610	**453660**		
2	**Արարատի մարզ, այդ թվում**	**l**	**680**	**680**	**680**	**680**	**680**	**680**	**4080**		
	ք. Արտաշատ	**l**	170	170	170	170	170	170	**1020**		
	ք. Արարատ	**l**	170	170	170	170	170	170	**1020**		
	ք. Վեդի	**l**	170	170	170	170	170	170	**1020**		
	ք. Մասիս	**l**	170	170	170	170	170	170	**1020**		
3	**Արմավիրի մարզ, այդ թվում**	**l**	**900**	**900**	**900**	**900**	**900**	**900**	**5400**		
	ք. Էջմիածին	**l**	225	225	225	225	225	225	**1350**		
	ք. Արմավիր	**l**	225	225	225	225	225	225	**1350**		
	ք. Բաղրամյան	**l**	225	225	225	225	225	225	**1350**		
	ք. Մեծամոր	**l**	225	225	225	225	225	225	**1350**		
4	**Արագածոտնի մարզ, այդ թվում**	**l**	**860**	**860**	**860**	**860**	**860**	**860**	**5160**		
	ք. Աշտարակ	**l**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Ապարան	**l**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Արագած	**l**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Թալին	**l**	215	215	215	215	215	215	**1290**		
5	**Գեղարքունիքի մարզ, այդ թվում**	**l**	**990**	**990**	**990**	**990**	**990**	**990**	**5940**		
	ք. Գավառ	**l**	390	390	390	390	390	390	**2340**		
	ք. Սևան	**l**	150	150	150	150	150	150	**900**		
	ք. Վարդենիս	**l**	150	150	150	150	150	150	**900**		
	ք. Մարտունի	**l**	150	150	150	150	150	150	**900**		
	ք. Ճամբարակ	**l**	150	150	150	150	150	150	**900**		
6	**Կոտայքի մարզ, այդ թվում**	**l**	**840**	**840**	**840**	**840**	**840**	**840**	**5040**		
	ք. Հրազդան	**l**	168	168	168	168	168	168	**1008**		
	ք. Աբովյան	**l**	168	168	168	168	168	168	**1008**		
	ք. Չարենցավան	**l**	168	168	168	168	168	168	**1008**		
	ք. Ծաղկաձոր	**l**	168	168	168	168	168	168	**1008**		
	ք. Եղվարդ	**l**	168	168	168	168	168	168	**1008**		
7	**Վայոց Ձորի մարզ, այդ թվում**	**l**	**840**	**840**	**840**	**840**	**840**	**840**	**5040**		
	ք. Եղեգնաձոր	**l**	410	410	410	410	410	410	**2460**		
	ք. Վայք	**l**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Ջերմուկ	**l**	215	215	215	215	215	215	**1290**		
8	**Սյունիքի մարզ, այդ թվում**	**l**	**1460**	**1460**	**1460**	**1460**	**1460**	**1460**	**8760**		
	ք. Կապան	**l**	395	395	395	395	395	395	**2370**		
	ք. Գորիս	**l**	213	213	213	213	213	213	**1278**		
	ք. Սիսիան	**l**	213	213	213	213	213	213	**1278**		
	ք. Մեղրի	**l**	213	213	213	213	213	213	**1278**		
	ք. Ագարակ	**l**	213	213	213	213	213	213	**1278**		
	ք. Քաջարան	**l**	213	213	213	213	213	213	**1278**		

9	**Լոռու մարզ, այդ թվում**	**լ**	**8490**	**8490**	**8490**	**8490**	**8490**	**8490**	**50940**		
	ք. Վանաձոր	**լ**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Ալավերդի	**լ**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Ստեփանավան	**լ**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Սպիտակ	**լ**	215	215	215	215	215	215	**1290**		
	ք. Տաշիր	**լ**	215	215	215	215	215	215	**1290**		
	գ. Ձորագետ	**լ**	215	215	215	215	215	215	**1290**		
	գ. Պուշկինո /բաքով/*	**լ**	7200	7200	7200	7200	7200	7200	**43200**		
10	**Շիրակի մարզ, այդ թվում**	**լ**	**3400**	**3400**	**3400**	**3400**	**3400**	**3400**	**20400**		
	ք. Գյումրի	**լ**	740	740	740	740	740	740	**4440**		
	ք. Աշոցք	**լ**	240	240	240	240	240	240	**1440**		
	ք. Աշոցք ՍՋ /բաքով/*	**լ**	1700	1700	1700	1700	1700	1700	**10200**		
	ք. Ամասիա	**լ**	240	240	240	240	240	240	**1440**		
	ք. Մարալիկ	**լ**	240	240	240	240	240	240	**1440**		
	ք. Արթիկ	**լ**	240	240	240	240	240	240	**1440**		
11	**Տավուշի մարզ, այդ թվում**	**լ**	**1220**	**1220**	**1220**	**1220**	**1220**	**1220**	**7320**		
	ք. Իջևան	**լ**	420	420	420	420	420	420	**2520**		
	ք. Բերդ	**լ**	200	200	200	200	200	200	**1200**		
	ք. Նոյեմբերյան	**լ**	200	200	200	200	200	200	**1200**		
	ք. Դիլիջան	**լ**	200	200	200	200	200	200	**1200**		
	գ. Բագրատաշեն	**լ**	200	200	200	200	200	200	**1200**		
	Ընդամենը										

Ծանոթություն՝

1. Բենզին «Ռեգուլյար» ապրանքատեսակի ք. Երևանի 3- րդ և 4-րդ եռամսյակների քանակից՝ 295260լ-ի /ամսեկան 49210լ/ պահանջարկը կտրոնով է և 158400 լ-ի /ամսեկան 26400 լ/ պահանջարկը բաքով է,

2. Բենզին «Ռեգուլյար» ապրանքատեսակի բոլոր մարզերի քանակների պահանջարկը կտրոնով է՝ բացառությամբ *-ով նշված վայրերից:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱ ծառայություն
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

_____
_____
_____

Հ/հ _____
ՀՎՀՀ _____

Հավելված 3

«___» _____ 2014թ. կնքված

N _____

ապրանքների մատակարարման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ

ՀՀ դրամ

Չափ-նի համարը	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում						
		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Բենզին «Ռեգուլյար»	16,66%	33,34%	50%	66,66%	83,34%	100%	100%

**** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով: Վճարումն կիրականացվի պայմանագրի 4.2 կետի համաձայն:***

Հավելված 4

<<____>> _____20 թ. կնքված N _____

ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու	Կատարող
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<__>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ <<_____ >> :

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__ >> <<_____>> 20 թ.

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս_____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով,որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները,մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<__>> <<_____>> 20 թ-ից <<__>> <<_____>> 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ծառայության մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն,անուն_____	ազգանուն,անուն_____
Կ.Տ	Կ.Տ